



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտանագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՅԵ. ՀՐԱՆՏ

ԼԵՆԻՆԻԶՄԻ ԱԵՎԻԶԻԱՅԻ  
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԵՐԻ

ԴԵՄ




ԹԵՍՂԻՍ - 1929

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ





ՅԵՇԻՐԱՆՑ

ՅԿԴ  
Հ



ԼԵՆԻՆԻԶՄԻ ՌԵՎԻԶԻԱՅԻ  
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԵՐԻ

ԴԵՍ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1929

ՊԵՏՏՐԱՏԻ II ՏՊԱՐԱՆ  
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հրատ. № 977 Պ. № 466

Տիրամ 1500

Գրառեպլաբ № 2063 (բ.)

# ԼԵՆԻՆԻ ԶՄԻ ՌԵՎԻԶԻԱՅԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԵՐԻ ԴԵՄ

## ԱԶ ԹԵՂՄԱՆ ԲՑՈՒՐԵՎԸՑՈՒՄԸ

«... Յես իմ ճառի մեջ հաստատում ելի, վոր Համկոմկուսի ներսում աջ վտանգի գեմ տարվող պալուարի զարգացման տվյալ շրջանում պալքարի հիմնական մեթոդ և հանդիսանում իդեոլոգիականը, վորը չի բացասում առանձին դեպքերում կազմակերպչական յեղակացություններ անել: Յես այդ թիզիսը հիմնավորում ելի նրանով, վոր աշերը Համկոմկուսում դեռ չեն բյուրեղացին, ֆրակցիա կամ խմբավորում չեն ներկայացնում և Համկոմկուսի կենտրոմի վորոշումները չկիրառելու դեռևս վոչ մի դեպք չեն տվել, Յես իմ նառում հաստատում ելի, վոր յերե աջերը Ֆրակցիոն պայքարի դիրքերի անցնեն յել սկսեն խափանել Համկոմկուսի կենսկոմի վորոշումները, կուսակցությունը նրանց նետ կվերաբերվի այնպես, ինչպես ՏՐՈԳԼԻՍՆԵՐԻ հետ 1927 թ.»: (Ընդգծումներն իմն են: Յե. Հ.):

Ահա այսպես և պատասխանում ընկ. Ստալինը գերմանական կոմկուսի հաշտվողականներին ու նրանց լիդեր Եվերտին, յերբ վերջինները գերմ. կոմկուսի ներսում արդին իրանց ֆրակցիան ստեղծած աջերի նկատմամբ առաջարկում են սահմանափակվել զուտ իդեոլոգիական պալքարով: Դրանով նրանք Համկոմկուսի նկատմամբ ճիշտ դրությունը խորամանկորեն

գերմանական կուսակցության վրա տարածելու փորձ  
են անում\*):

Բրանդերյան կազմակերպված աջ ոպպորտյունիս-  
տական ֆրակցիայի ղեմ գերմանական հաշտվողական-  
ներն ալդպիսով առաջարկում են գործադրել իդեոլո-  
գիական միջոցներ, ովտագործելով ընկ. Ստալինի՝  
մեր կուսակցության համար՝ ճիշտ միտքը: Նրանք  
հարցին մոտենում են մեխանիկորեն, անկախ ժա-  
նակից ու տարածությունից: Չե՞ վոր ընկ. Ստալինի  
ասածը վերաբերում ե Համկոմկուսին, նրա շարքերում  
արտահայտված աջ թեքմանը և ասված և կենտկոմի  
նոյնմբերյան պլենումում, յերբ Գերմանիայում աջ բե-  
նումը վորպես Ֆրակցիա արդեն իսկ հայտնաբերվել եր:

Դժբախտաբար մեզանում, մեր կուսակցության  
շարքերում քիչ չեն այնպիսիները, վորոնք համարյա-  
թե նույն ձևով են դնում հարցը, տուրք տալիս հաշտ-  
վողականությանը, «այդ վախկոտ ոպպորտյունիզմին»:

Մարդիկ աջ ու ձախ անվերջ կրկնում են, թե  
Ստալինն ասել ե իդեոլոգիական պարզարի մասին,  
շեշտը դրա զրել, ել ի՞նչ կարիք կա աջ թեքման  
ձևակերպման, նրա զարգացման նոր շրջանի մասին  
խոսել: Այդպիս մտածողներին լավագույն պատասխան  
ե տալիս մեր վերև բերված քաղվածքն ընկ. Ստալինի  
ճառից: Զպիտի մոռանալ, վոր յեթե այդ կերպ  
մտածողների վորոշ մասն անգիտակցորեն հաշտվողա-  
կանության գիրկն ե ընկնում, ապա կան մարդիկ,  
վորոնք աշխատում են թագնվել Ստալինի այդ ճիշտ  
մտքի յետեր, պատասխան կանգնելով աջ թեքմանը:

\*) Տես ընկ. Ստալինի ճառը կոմինտերնի Գործկոմի  
նախագահության 1928 թ. դեկտեմբերի 19-ի նիստում  
«Большевик» 23 թ. № 23—24, յերես—45:

Այս անցած ամիսների ընթացքում աջ թեքումը դասակարգավին թշնամուն թերափնահատող, նրա դիմումը ուժության և մեր դժվարությունների առաջ նահանջող տենդինցիների գումարը ձևակերպելու ձգտումն և հայտնաբերելու նա զարգացման վորոշ աստիճան և անցել, իր նախկին գրությունից դուրս զալով՝ շեշտակի գունավորում և ստացել:

Այսոր արդեն վոչ միայն գոյություն ունեն աջ արամագրությունները ձևակերպող հակառակուսակցական պլատֆորմայի եկեմենատները, այլև ակներեւ են առանձին ֆրակցիա ստեղծելու բացահայտ տենդինցիները, կուսակցության քաղաքականությունը բոլոր գծերով հարվածող և կասկածի տակ առնող ձգտումները։ Միաժամանակ վերջին շրջանում կուսակցության վորոշումներին չենթարկվելու խայտառակ փաստեր են արձանագրված։

Նման պայմաններում կույր, միամիտ պիտի լինել կամ չար միտում ունենալ՝ չնկատելու համար այն նորը, զարգացման յուրահատուկ կողմը, վոր կրում և այսոր աջ թեքումը, քան եր այդ սրանից 4—5 ամիս առաջ։

Պրոլետարական դիկտուտուրայի ամրացման, մեր հեղափոխության զարգացման հիմնական խնդիրներում աջ տարրերը հանդես են գալիս մի ամբողջ հակակուսակցական պլատֆորմայով։ Տարբեր պայմաններում, նոր հիման վրա լենինիցմը ուսիրիդայի լենթարկելու փորձեր են կատարվում լենինի հեղինակության լետե թագնվելով։

**ԲԵՆՎԱՐԵ-ԴՅՈՒՂԵՑԻԵԿԱՆ ԳԵՇԻՆՔԻ ԵՄՐԱՑՄԱՆ  
ՆՈՐ ՑՐԶԱՆՔ**

Համամիութենական կոմմունիստական կուսակցությունը և բանվոր դասակարգը սոցիալիզմ են կառուցում հետամնաց գյուղացիական մի լերկրում, ուր ընակչության մեծամասնությունը կազմում է գյուղացիությունը։ Այստեղ հեղափոխության զարգացման բոլոր ետապներումն ել հիմնական, վճռական նշանակություն ունի բանվորա-գյուղացիական դաշինքի խնդիրը, բանվոր դասակարգի ղեկավարությամբ հինը քանդելու և նորն ստեղծելու։ պրոբլեմը։

Թե վետրվարյան բութուական հեղափոխության միջոցին և թե նրանից հետո հաղթական Հոկտեմբերի բարեհկազներում ելական դեր ե խաղացել բանվոր դասակարգի՝ վերաբերմունքի խնդիրը դեպի գյուղացիությունը։ Կենտրոնական այդ մոմենտը լերենք իր նշանակությունը չի կորցրել թե տնտեսական շինարարության սկզբի շրջանում և թե սոցիալիստական համատարած արշավի, մեր հեղափոխության զարգացման դժվարին այս որերում։

Սակայն կարեորն այն ե, վոր այդ բոլոր շրջաններում ել վոչ միայն բանվոր դասակարգի կողմից շարունակ անփոփոխ նույն վերաբերմունքը չի լեզել դեպի գյուղացիությունն, այլ և բանվորա-գյուղացիական բլոկը՝ պրոլետարիատի հաստատ ղեկավարությամբ՝ հեղափոխության զարգացման յուրաքանչյուր ետապում տարբեր ձևեր և ընդունել։

Եեվ այդ միանգամայն հասկանալի լի հեղափոխական մարքսիզմի-լենինիզմի հիմքերը մարսագ

յուրաքանչյուր կոմմունիստի համար, քանի վոր բանվորա-դյուլացիական դաշինքը վոչ թե նպատակ ե, այլ լոկ միջոց։ Նա միջոց և դասակարգերի վոչնչացման, «վերացնելու բանվորների և գյուղացիների միջնյեղած տարբերությունը, բոլորին աշխատողներ դարձընելու» (Անին)։

Հստ պայմանների և հեղափոխության առաջադրած խնդիրների բանվորա-դյուլացիական դաշինքը յուրաքանչյուր տվյալ մոմենտում կրել ե իր շեշտը, ունեցել և ընդհանուր շղթայի այն ողակը, վրբից պինդ բռնել և կուսակցությունը։

Հարցի կարեւորությունը նկատի առնելով, անհրաժեշտ ե մի թեթև պատմական եքսկուրսիա կատարել՝ ցուց տալու համար բանվորա-դյուլացիական դաշինքի տարբեր շրջաններում կրած եւական կողմը և հետապնդած անմիջական նպատակը։

Բուրժուական հեղափոխության միջոցին կուսակցության լոգունգն եր՝ պրոլետարիատը վողջ գյուղացիության հետ միասին ընդդեմ ցարիզմի և ավատականություն, բուրժուազիայի չեղոքացումով, պրոլետարական հեղափոխության միջոցին՝ բանվոր դասակարգը գյուղական չքավորության վրա հենված, միջակին չեղոքացնելով, ընդդեմ քաղաքի և գյուղի բուրժուազիայի \*):

\*). Զպիտի մուանալ, վոր մեր հեղափոխության՝ զարդացման կոնկրետ ընթացքի հետեանքով, կուսակցության լոգունգների կիրառումը ժամանակի իմաստով այլ պատկեր ստացավ։

Խնչպես, որինակ, այն, վոր հոկտեմբերին, յերբ քաղաքում սոցիալիստական հեղափոխություն եր տեղի ունենում, գյուղբնաստորին դեռ նոր եր կատարում իր բուրժուական հեղափոխությունը և սոցիալիստականին ձեռնարկեց միայն 1918 թ.։

Ապա դալիս և բանվորա-գյուղացիական դաշինքի զարգացման նոր շրջանը, յերբ պրոլետարիատն իր իշխանությունն ամրացնելուց հետո միջակին տնտեսական շինարարությանն ակտիվ մասնակից անելու քաղաքականությունն և վարում։ Այդ շրջանում դրվում և միջակ գյուղացու խնդիրն, իբրև հողագործության կենտրոնական գեմքի։

Այդ յերեք շրջաններից յուրաքանչյուրը, գյուղացիության նկատմամբ պրոլետարիատի րոնած տարրեր դիրքավորման հետևանքով, ունեցել ե իր յուրահատուկ խնդիրները, անմիջական նպատակները, վորոնց մասին մենք արդեն հիշատակեցինք միջանկյալ։

Եթե առաջին շրջանի հիմնական խնդիրն եր կալվածատիրության տապալումը և պրոլետարիատի ու գյուղացիության գեմոկրատական դիկտատուրայի հաստատումը, վոր դարձլալ իրականության մեջ յուրահատուկ ընթացք ունեցավ, ապա յերկրորդ շրջանը, չքավորի վրա հենվելու, միջակին չեզոքացնելու ետապը հիմք դրեց պրոլետարական դիկտատուրային։

Այնուհետև արդեն միջակի հետ պինդ դաշնակցած և չքավորի վրա ամուր հենված, կրւակին ուժգին հարվածելով, բանվոր դասակարգը ՆեՊ-ի ռելսերի վրա ձեռնարկում և տնտեսական շինարարության դժվարին աշխատանքներին, սոցիալիզմի կառուցման պրակտիկային։

Սակայն այստեղ ել բանվորա-գյուղացիական դաշինքի յերրորդ շրջանի ալդ հիմնական ելությունը միշտ միևնույն ձևով, միջոցով չի իրագործվում։ Հայտնի յե, վոր ՆեՊ-ի կիրառման սկզբնական շրջանում էինինը հսկալական կարևորություն եր տալիս քաղա-

քի ու գյուղի միջև փոխանակություն հաստատելուն, առևտրի զարգացմանը: Յեվ յեթե մենք վերցնենք մեր կուս, համագումարները, նրանց վորոշութիւնները, առա կտեսնենք, վոր այդ շրջանում՝ 10, 11, 12, 13-րդ համագումարներում դաշինքի զարգացման շղթայի հիմնական ուղակները ձգվում են հենց առևտրական հարաբերությունների, փոխանակության պրոցեսի աճման և ապա այն կոռպերատիվ հունի մեջ առնելու ուղղությամբ: Մեր տնտեսության վերականգնման ամբողջ շրջանում, մինչև 1925—26 թ. եկական դեր ե խաղացել քաղաքի և գյուղի միջև յեղած փոխանակության կոռպերացման պրոցեսը: Այդ առաջարիզում այսոր մենք արդեն խոշորագույն նվաճումներ կարող ենք արձանագրել: Ներկայումս թե սպառողական և թե գյուղատնտեսական կոռպերացիան քաղաքի ու գյուղի զողման գործում կարևորագույն տնտեսական ֆակտորներն են հանդիսանում փոխանակության գծով:

Ինչ խոսք, վոր դաշինքի այդ ձեզ, վոր հիմնական բացառիկ նշանակություն ուներ ՆեՊ-ի կիրառման սկզբից մինչև մեր տնտեսության վերականգնման շրջանի ավարտումը, հետագայում ևս ոմեն կերպ պիտի զարգացնել՝ ավրանքափոխանակությունն ամբողջովին կոռպերացիայի ցանցի մեջ առնելու համար:

Գյուղատնտեսության ռեկոնստրուկցիայի սկզբանումով հիմնական նշանակություն ե ստանում արդեն արտադրական պրոցեսսը, նրա կոռպերացումը, կոլխոզների և սովխոզների կազմակերպումը, նրանց քանակական և վորակական աճումը, վորոնք և կազմում են բանվորագյուղացիական դաշինքի ամբացման նոր ձևերը:

Կուսակցության 15-րդ համագումարի բացառիկ նշանակությունը հենց այն է, վոր նա կտրուկ կերպով գրեց գլուղի սոցիալիստական վերակառուցման խընդիրը, բանվորա-գյուղացիական դաշինքի զարգացման նոր ձևերի ծավալման վրա շեշտ գնելով։ Այդ, իհարկե, նշանակում, թե համագումարը մոռացության տվեց գյուղական անհատական տնտեսությունները, կամ նրանց հետագա զարգացման համար գործադրվելիք անհրաժեշտ և հնարավոր միջոցները դաշինքի սահմանափակությունը գուրս անկարեռ բան համարեց։ Մխալվում է ընկ. Զինովյեվը, ինքը այլպես և գնում հարցը։ Նրա կարծիքով բանվորա-գյուղացիական դաշինքը պիտի ամրացնել միայն գյուղատնտեսության կողեկտիվացման հիման վրա և միայն այդպես պիտի հասկանալ 15-րդ համագումարի վորուսները\*), (Բնդգծումներն իմն են։ Յե. Հ.):

Այդ կերպ մեկնարանել 15-րդ համագումարի հայտնի վորոշումները՝ նշանակում և հարցին մոտենալ միակողմանի և, մեղմ ասած, քաղաքականության մեջ վտանգավոր գործ կատարել։ Նախ պիտի շեշտել այն, վոր կողեկտիվացման գործը կուսակցությունը չի հակադրում անհատական տնտեսությունների բարձրացման համար ձեռնարկվող միջոցներին։ Այդ խընդիրները սերտորեն կապված են միմյանց հետ։ Անհատական չքավոր-միջակ տնտեսությունների զարգացումը, այս ուղղությամբ կատարվող աշխատանքը ևս պիտի ամրացնի բանվորա-գյուղացիական դաշինքը։ Սա ինքը չպետք է մոռանալ և աչքաթող անել։

\*.) Տես «Պրավդա» № 16, վետրվար 1929 թ., Յինօվյեվի «Օ чистке партии» հոդվածը։

Սակայն միաժամանակ պիտի արձանագրել, վոր շեշտը դրվում ե գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, բանվորա-գյուղացիական դաշինքի ամրացման նոր ձևերի—կոլխոզների ու սովխոզների ծավալման վրա: Պարզ ձևերը զարգանալով՝ տեղի յեն տալիս ավելի բարդ ձևերի: Բանվորա-գյուղացիական դաշինքը գարգանալով՝ և ամրանալով՝ թևակոխում ե ավելի բարձր շրջան:

Հենց այդպիս ել մոտեցել ի հարցին կուսակցության 15-րդ համագումարը, արձանագրելով, վոր «ներկա ժամանակաշրջանում անհատական գյուղացիական տնտեսությունները խոշոր կոլեկտիվների մեջ կազմակերպելու գործը պետք է հանդիսանա կուսակցության նիմնական խնդիրը գյուղում»:

Ցեղ 15 ըդ համագումարի այդ կարևորագույն վորոշումները հիմք ընդունելով ու նրանց անսալթաք կիրառման համար ե, վոր Կենտկոմի վերջին, նոյնմընթաց պլենումը նույնպիս շեշտեց, վոր «այդպիսով պրոլետարիատի դեպի միջակ ու չփակար գյուղացիությունն ունեցած վերաբերմունքի հարցը նոր պայմաններում լեկ այլ կերպ ե կանգնում կուսակցության համար առաջին պլանի վրա: Ներկայումս բանվոր գասակարգի համար գյուղատնտեսության արտադրության տեխնիկայի և գյուղի տնտեսական հարաբերությունների՝ արդարիսին համայնացման ուղղությամբ վերակառուցելու գործի վրա, հեղափոխականացուցիչ ազգեցության հնարավորությունները հսկալական չափով աճել են\*):

Այսպիսով, հեղափոխության զարգացման տը-

\*.) Ցեղ Կենտկոմի նոյնմընթաց պլենումի բանաձեռը, եջ 18, 1928 թ.:

վլալ մոմենտում, դաշինքի արդեն գոյություն ունեցող ձեերին, ուր բանվոր դասակարգը հսկայական նվաճումներ և ձեռք բերել, ավելանում և առաջին ոլլանի յե գրվում «արտադրական դուչինքի» միջոցով գրուղատնտեսության վրա ազդելու, այն սոցիալիստական վերակառուցման յենթարկելու խնդիրը:

Շատ հետաքրքրական է, թե ինչ յուրահատուկ ձեերով և կատարվում այսոր լենինիզմի ռեվիզիան բանվորագուղացիական դաշինքի հարցում, ռեվիզիա այն իմաստով, վոր մարդիկ թագնվելով լենինի անվան տակ, միաժամանակ փորձ են անում կիսել նրան, մեկնաբանել այլ ուղղությամբ:

Լենինը յեկս գործել ե ծամանակի ու տարածուրյան մեջ յեկ նրա արտահայտած այս կամ այն կարեվորագույն միտքը կարելի յե ու պիտի հասկանալ միայն այդ կապակցուրյամբ: Այն, ինչ լենինն ասել ե տարիներ տռաջ, չի կարելի մեխանիկորեն փոխադրել մեր այսորվա պահմաններում և դրանով վորոշակի հիմնավորութներ անել: Նման դեպքում լենինիզմը, վորապես նոր հասարակակարգի կառուցման մարտական ուսմունք, կորցնում ե իր անմիջական հեղափոխական նշանակությունը և սխողաստիկ վարդապետության վերածվում:

Ներկայումս դաշինքն իրագործվում ե տնտեսության ռեկոնստրուկցիայի, սոցիալիստական հարձակման շրջանում: Բանվորագուղացիական խնդիրը չի դրված այնպես, ինչպես եր այդ առաջ: Վոչ թե ընդհանրապես դաշինք, այլ կոլեկտիվացման, գլուղի ու գյուղացիության սոցիալիստական վիրակառուցման ու վերամշակման հիման վրա: Յեթե դաշինքի հարցը դրվել ընդհանրապես յեկ գյուղացիուրյան ամբողջ մաս-

սայի հետ, այն դեպքում կարելի յել լողաւնգ տալ «հաւըստացման» և «կուլտկի սոցիալիզմի մեջ ներածելու» մասին:

Իր ժամանակին, կուսակցության 14-րդ համագումարի նախորդակին առանձին աչքի ընկնող ընկերաների կողմից տրված այդ լոգունգները՝ միանգամայն իրավացիորեն կուսակցությունը դատապարտեց վորպես հակալինինյան, հակակուսակցական լոգունգներ։ Ինքը նեղինակն ել կուսակցության ու նրա ղեկավարորդանների պահանջով և ազդեցության տակ հրաժարվեց նրանցից։

Ցեթե այդ լոգունգների իմաստը քննենք գյուղացիության հարցի վերաբերյալ այսոր գոյություն ունեցող տարածայնությունների լույսի տակ, ապա դըժվար չեն նկատել վոր դաշինքի նոր ձևերի կարեւությունը չհասկացողները, փաստորեն, վերաբտադրում են իրենց այդ սխալները։

Այսոր չի կարելի ընդիանրապես դաշինքի մասին խոսել, ընդիանրապես գյուղի արտադրողական ուժերի զարգացման հարցը դնել։ Անհրաժեշտ և աշխատանքի ու պայքարի անցած ըլջանը հաշվի առնելով, քաղաքի ու գյուղի հարաբերությունների մեջ առաջացած վորակական փոփոխությունները հիմք ընդունելով, ընդհանուր շղթայի նոր ողակներից պինդ բռնել։ Այդպես և սովորեցնում հեղափոխական մարքսիզմը, այդ և պահանջում սոցիալիզմի կառուցման համար մարտնչող լենինիզմը։

Մարքսն ու Ենգելսը, զիտական սոցիալիզմի հիմնադիրները շնչտել են պեոլետարիատի՝ վորպես իշխող դասակարգի՝ գյուղացիության նկատմամբ վարե-

լիք զգուշ ու խելացի քաղաքականության բացառիկ նըւ շանակությունը, նրա հսկայական կարևորությունը: Բայց նրանք նոր հասարակակարգ ստեղծելու հեղափոխական ուսմունքի հիմնադիրներ չեյին լինի, ինթե հարցը միմիայն այդ կերպ դնեյին, կամ ավելի ճիշտ, սահմանափակվեյին դրանով, այն կողմը չտեսնեյին: Ամբողջ խնդիրն ել նրանումն ե, վոր նրանք դրան կապված, դրան զուգրնթաց դրել են նաև զյուլատեսեսուրյան վերակառուցման, զյուլացիուրյան վերափոխման խնդիրը, քանի վոր պրոլետարիատի դիկտատուրան դիտել են նաև վորպես դաշինք, ուր պրոլետարիատը զեկավարող և առաջնորդող դեր կատարելով, ձգտում ե դասակարգերի վերացմանը, իր վողջ կառուցողական-ստեղծագործական աշխատանքն այդ գերազույն իդեալով համակում:

Կապիտալիզմի զարգացման նոր դարաշրջանում, իմպերիալիզմի եպոխայում Մարքսի ու Ենդելսի գործը շարունակելով և նոր հասարակակարգի կառուցման մարտական ուսմունքը ճոխացնելով, Լենինը ներառյուրյուն ուներ ավելի կոնկրետ ու մանրամասն այդ խնդիրներն արծարծելու: Նա իր բազմաթիվ աշխատություններում շատ սուր կերպով դրել ե բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման ու ամրացման հարցը, քանից շեշտել նրա բացառիկ կարևորությունը, հատկապես մեր պայմաններում:

Հայտնի յե, վոր իր վերջին հոդվածներից՝ մեկում, ԲԳՏ մասին գրված, Լենինը վորոշակի կերպով ասում ե, թե մեր կուսակցության զիսավոր խնդիրն են հետեւել ու հսկել բանվորագյուղացիական դաշինքին, քանի վոր նրա պառակտումը կործանիչ կլինի խոր-

հըրդալին հանրապետության, պրոլետարիատի գիկտաւառուրայի համար:

Թվում ե, թե ավելի ռելյեֆ ու շեշտակի չի կարելի արտահայտել այն բացառիկ կարևորությունը և նշանակությունը, վոր ունի բանվորա-գյուղացիական դաշինքը:

Անշուշտ մարդիկ այսոր լավ բան են անում, յերբ կուսակցությանը հիշեցնում են այդ, խոսում Լենինի քաղաքական ավանդների մասին։ Բայց նրանց արած այդ լավ բանն իր հակապատկերն ե ընդունում, յերբ դրանից այն կողմը չգնալով, միայն դրա վրա կանգ առնելով, Լենինի քաղաքական ավանդների մասին ճառողները չեն նկատում, աչքաթող են անում այն հիմնական միջոցներն ու, ձևերը, վորոնցով կարելի յե և պիտի ամրացնել ներկա շրջանում բանվորա-գյուղացիական դաշինքը։

Զե՞ վոր դաշինքի անհրաժեշտությունը լավագույն յեկ սպառիչ կերպով հիմնավորող Լենինը շեշտել ե, վոր ուսենի կապիտալիզմի արմատները չենի պոկել յեկ ներքին քենամու Ֆունդամենտը, նիմքը չենի տատանել, վոր «քանի մենք ապրում ենք մանր-գյուղացիական յերկրում, կապիտալիզմի համար մեզանում ավելի ուժեղ բազա կա, քան թե կոմմունիզմի (17-րդ, 427-428)։ Նա միաժամանակ ասել ե, վոր առանց ելեկտրիֆիկացիայի, առանց գյուղատնտեսությունը բարձր մեքենայական տեխնիկայի փոխազրելու, մանր-անհատական տնտեսությունների գերակշռող պայմաններում անխուսափելի յե կապիտալիզմի ռեստավրացիան։

**Իհարկե, այն շրջանի հետ համեմատած, յերբ Լենինը գրել ե այդ տողերը, շատ ժամանակ ե անցել,**

շատ բան և փոխվել, պրոլետարիատի սոցիալիստական դիրքերն ամրացել։ Սակայն Լենինի խոսերը կապիտալիզմի համար ուժեղ տեսական բազա լինելու մասին շարունակում են պահպանել իրենց ուժը։

Լենինի մեծությունն ու հանճարը նրանունն է, վոր նա տեսել և դրել և հարցն իր ամբողջությամբ, բազմաբովանդակ կողմերով։

Ցեթե 1922 թ. գրած իր հոդվածում Լենինը զըրում եր այն մասին, վոր պիտի սկսել քաղաքի և գյուղի միջև կապ հաստատելուց, նախորոք նպատակ չըդնելով գյուղը զոռով կոմմունիզմ մտցնել, ապա միանգամայն անթուլատրելի յե և մատերիալիստական դիալեկտիկան իրեն հիմք ունեցող լենինիզմի ֆայլսիֆիկացիա յե, յերբ այսոր մարդիկ մեխանիկորեն կրկնում են այդ միտքը և միայն դրանով, իրականում մեծ մասամբ արդեն անցած շրջանի խնդիրներով դաշինքի ամրության անհրաժեշտությունը հիմնավորում, շեշտը դրանց վրա դնում։

Կուսակցությունը յերբեք զոռով չի ձգտել և ձըգտում գյուղը կոմմունիզմ մտցնել դաշինքի հիմքը նա այսոր իլ միայն կոլեկտիվացումը չի համարում։ Բայց չե՞ վոր փոխվել են պայմաններն ու կացությունը 1922 թ. հետ համեմատած, յերբ քաղաքի ու գյուղի միջև հասարակ կապ հաստատելուց եր պետք սկսել։ Այն, ինչ հնարավոր չեր 1922 թվին, հնարավոր ու անհրաժեշտ ե ալսոր։

Անցած տարիների մեր աշխատանքի արդյունքն ալսոր այն ե, վոր այդ կապն արդեն հաստատված ե, վոր գյուղի դեմքը փոխվել ե, վոր այսոր գյուղացիության հիմնական մասսային դաշինքի ամրացման և պլո-

Հետարիատի ղեկավար դերի մեջ կարելի յե համակելու շահագրգռեն՝ առաջին պլանի դնելով «արտադրական դաշինքը»:

Զե՞ր այս անցած տարիներում փոխվել են մեր լերկը արտադրողական ուժերը, նրանց վրա բարձրացող արտադրական հարաբերությունները և դասակարգակին փոխարարերությունները, վորոնք այլևս անբավարար են դարձնում դաշինքի միայն հին ձևերը:

Յեթե Լենինին ուելիողիալի յենթարկելու այդ փորձերին ավելացնենք այն, թե Լենինը գյուղի սոցիալստական վերակառուցման խոդիրը դրել եւսիայն ընդհանուր գծերով, և վոր «մեզանում շատ պրոլեմներ միքիչ այլ կերպ դրվեցին», ապա միանգամայն պարզ ե այդպիս մտածողների «փիլիսոփայության» վողջ իմաստը: Նրանք դեմ են կոլլեկտիվացման ներկա տեմպին, սխալ են համարում կուսակցության այդ ուղղությամբ տարվող համառ աշխատանքը:

Այլ կերպ ասած՝ այն, ինչ բացահայտ կերպով ասում ե Ֆրումկինը, մյուսներն այդ ասում են Լենինի թիկունքում թագնվելով, իրենց հակակուսակցական, հակալենինյան տեսակետները լենինիզմով քողարկելով: Ինչպի բացատրել այն, վոր 1929 թ. Լենինի քաղաքական ավանդների մասին ճառողները համարյա թե չեն նկատում դասակարգալին պայքարը, կուլակի ու նեպմանի ակտիվացումը, յերբեմ լկտիացումը, թերագնահատում են գյուղի սոցիալիստական վերակառուցման շեշտակի անհրաժեշտությունը և դեմ դուրս գալիս ինդուստրիացման ուժեղ տեմպին:

Մինչզեռ այդ ե պահանջում իսկական մարտական-հեղափոխական լենինիզմը, նրա հաղթական վոգին և նրա անսալթաք ու աներեր իրագործումը:

## ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻՑ ՏԵՄՊԻ ԽՆԴԻՐԸ

Ներկայումս գլուղի կոլեկտիվացումը հիմնական խնդիր չհամարողները, անհատական տնտեսությունների պահպանման վրա շեշտը դնողները հետեւղական կերպով զարգացնելով իրենց տեսակետները, դեմ ևն դուրս դալիս կուսակցության վարած ինդրւատրիացման տեմպի ուժեղացման քաղաքականության կամածից գուրս և, վոր գլուղի կոլեկտիվացումը, նրա սոցիալիստական վերակառուցումը պայմանավորվում և արդյունաբերության ու առաջին հերթին ծանր արդյունաբերության զարգացումով։ Առանց ծանր արդյունաբերության զարգացման, առանց գլուղատնտեսության մեջնաշինարարության, վերջապես, առանց քիմիական արդյունաբերության անկարելի յե գյուղատնտեսության բարձրացման տեմպի ուժեղացումը, նրա սոցիալիստական վերակառուցումը։

Ինչպես ասացինք, ինդուստրիացման ուժեղ տեմպին դեմ լինելու քաղաքականությունը դեմ և միաժամանակ գյուղի կոլեկտիվացման ներկա պրոցեսսին և կուրս և վերցնում դեպի անհատական գլուղացիական տնտեսությունները, շեշտը դրանց վրա դնում։ Աջերի այդ ամբողջ պլատֆորմն ավելի քան վորոշ ու բացահայտ արտահայտել և ֆրումկինը։

Հայտնի լե, վոր կուսակցության կենտրոնի նոր ցեմքերլան պլենումի հաստատած կոնտրոլ թվերի համաձայն 1928—29 թ. տարում կապիտալ շինարարությունը նախորդի հետ համեմատած ավելացվում և 330 միլիոն ռուբլիով։ Այդպիսով այս տարի կապիտալ շինարարությունն աճում և մոտ 30 տոկոսով, այսինքն

ինդուստրիացման տեմպը վոչ միայն պահպանվում է, այլ յեվ ընդարձակվում, ուժեղացվում:

Իր ժամանակին, գեռւս մինչև Կենտկոմի նոյեմբերիան պլենումն առանձին ընկերներ իրենց զրավոր յելութեներում միանգամայն հակառակ տհսակետներ ելին արծարծում: Նրանք այնքան շբարի ցանկություն» ունեին, վոր ասում ելին, թե «հասկանալի էն, վոր մեզ համար չափից դուրս անցանկալի էլինի իջեցնել արդեն ձեռք բերված տեմպը» և այլն: Մարդիկ վոչ միայն տեմպի ուժեղացման դեռ ելին դուրս դալիս, այլ և նույնիսկ վորու վերապահումներով արդեն ձեռք բերված տեմպի պահպանման խնդիրը համարյա թե կասկածի տակ առնում: Լավ են, վոր զրա մխասակարությունը, տեմպի իջեցման բացասական նշանակությունը նրանք «հասկանալի ելին» համարում:

Սակայն տեմպի պահպանման հետ իրը հաշտվելով և նրա ուժեղացումն ուղեցում համարելով, իրենց արած բազմաթիվ վերապահումներով, կողմանակի զիտողություններով ժողոտնտեսության նեղ տեղերը հավասարեցնելու մասին, աջ ոպպորտյունիստական տրամադրությունների ներկայացուցիչները փաստորեն դեմ են դուրս դալիս ինդուստրիացման տեմպի վոչ միայն ուժեղացմանն, այլև պահպանմանը:

Մենք այստեղ նպատակ չունենք հատկապիս կանգ առնելու այն հարցի վրա, թե ընդհանրապես ինչ նշանակություն ունի ինդուստրիացումը, նրա թափի ուժեղացումը մեր զարգացման ներքին ու արտաքին քաղաքականության տեսակետից: Բազմիցս շեշտվել ե այն բացառիկ կարևորությունը, վոր ունի ինդուստրիացման տեմպի ուժեղացումը վոչ միայն մեր

վերջնական նպատակի, սոցիալիզմի կառուցումն, առաջարտելու, ալլև կապիտալիստական շրջապատի պայմաններում պրոլետարական դիկտատուրայի յերկրի տնտեսական անկախության, նրա պաշտպանունակության համար։ Պարզ են նաև ներքին պատճառները՝ վոչ միայն գյուղատնտեսության, ալլև թեթև արդյունաբերության անարգիլ զարգացումը պայմանավորվում են ծանր արդյունաբերությունով, նրա տեմպեռութեղացումով։ Հենց այդ կապակցությամբ պարզ են, թե ինչ մեծ նշանակություն ունի ժողովրդական տընտեսության, նրա առանձին ճյուղերի ճիշտ փոխհարաբերության պահպանման և անարգել զարգացման հարցը։ Միայն պրոլետարիատի դիկտատուրայի որով ե, վոր ճիշտ փոխհարաբերություն և հաստատվում արդյունաբերության և գյուղատնտեսության միջև, յերբ գյուղատնտեսությունը չի մոռացվում և աչքաթող արվում, չի քայքայվում ու կործանվում, յերբ պրոլետարական քաղաքն ամեն բան անում և գյուղը բարձրացնելու, իրեն մոտեցնելու, նպատակ ունենալով իսպառ վերացնելու քաղաքի և գյուղի միջև լեղածտարբերությունը։

Այդ հանգամանքը շատ ցայտուն կերպով արձանագրել ե Մարքսը դեռևս Պրոլունին նվիրված իր նշանավոր նամակում և 1848 թվի Փրանսիական հեղափոխության մասին գրված աշխատության մեջ։ Բայց դրանով, իհարկե, չեն ժխտվում զարգացման այն դրվագարությունները, վոր ծառանում են պրոլետարիատի իշխանության առաջ։

Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման միջև ճիշտ փոխհարաբերություն հաստա-

տելու հարցը, այլ կերպ ասած, մեր ժողովրդական տնտեսության հավասարակշռությունը պահպանելու խնդիրը հիմնական նշանակություն ունի: Զե՞ վոր այս գծով ևս ինդուստրիացման տեմպի պրոբլեմը դեմ ե առնում բանվորա-գյուղացիական դաշինքին: Պետք է այնպիսի փոխհարաբերություն հաստատվի, վոր տնտեսության այդ յերկու հիմնական ճյուղերի զարգացումն ապահովելով, միաժամանակ գերազույն չափով այն նպաստի պրոլետարիատի սոցիալիստական իդեալների իրագործմանը: Հսկայական կարևորություն ներկայացնող այդ խնդիրն ավելի դժվարանում է բարդանում և մեր յերկրի պայմաններում, ուր մանր գյուղացիական տնտեսությունները մեծ ծով են հանգիստանում: Ի՞նչպես անել, վոր արտաքին աշխարհի կապիտալիստական ողակավորմանը դիմանալով, յերկրի արտադրողական ուժերի աճման սոցիալիստական ընթացքն ապահովելով, բանվոր դասակարգի ու գյուղացիության հիմնական մասսայի տնտեսական դրության բարելավման աստիճանական բարձրացումով միաժամանակ հնարավոր մաքսիմալ չափերով առաջ տարվի յերկրի ինդուստրիացման գործը: Այս ե մեր կուսակցության քաղաքականության հիմնական խընդիրը: Այստեղ ե, վոր բաղխվում են դասակարգերի շահերը, և այդտեղից բղխող սխալներն են, վոր հակապրոլետարական տենդենցներ արտահայտելով, մեր պայմաններում ձևակերպում են հակա-լենինյան, հեղափոխությունն ու սոցիալիստական շինարարությունը տանուլ տալու տրամադրությունները:

Գաղտնիք չե, վոր ներկայումս մեր գյուղացիությունը արդյունարերական տպանքների վրա գերվճարում

և անում: Նա գյուղատնտեսական մթերքներն սպառում  
ե ավելի եժան, քան թե արդյունաբերական ապրանք-  
ներ ձեռք բերում: Այստեղ գոյություն ունի և դեռ  
վորոշ ժամանակ գոյություն ե ունենալու այսպես  
կոչված «մկրատը»: Այդ «մկրատի» վերացմանը մենք  
ձգտում ենք, կուսակցության քաղաքականությունն  
ուղղված ե դեպի այդ կողմը: Բայց խնդիրն այն է,  
վոր այսօր մենք չենք կարող անմիջապես վոչնչացնել  
«մկրատը», Միայն պըութարական դիկտատուրային  
և խորհրդային իշխանության թշնամիները կարող են  
հարցն այդ կերպ դնել: Չե վոր խոսել մկրատի ան-  
միջական վերացման մասին, այլ կերպ վերականգն-  
ման դների հարց դնել այդ նշանակում ե դեմ դուրս  
դալ յերկրի ինդուստրիացման գործին, ճախողել կա-  
պիտալիստական աշխարհից տնտեսական անկախու-  
թյուն ունենալու մեր համառ փորձերը: Մկրատի ան-  
միջական վերացման կողմնակիցներն անխուսափելիո-  
րեն արտահայտում են մեր դասակարգավին թշնամի-  
ների՝ կուլակի ու նեպմանի տրամադրությունները:

Սակայն կտրենոր ե անպայման շեշտել, վոր նույն  
գործին են նպաստում նաև նրանք, ովքեր մկրատի  
բիրանների լախացման, այլ կերպ՝ ինդուստրիացման  
համար գյուղն անխնայորեն թալանելու հարցն են  
բարձրացնում: Հայտնի ին, վոր այդ տեսակետն ար-  
տահայտում ելին տրոցկիստները, վորի տեսական  
հիմնավորումը տվել ե իր ժամանակին Պրեոբրաժեն-  
սկին: Նրա կարծիքով սոցիալիստական ինդուստրիա-  
ցումը կապիտալիստական մեթոդներով ե կատար-  
վելու:

Եեթե տրոցկիստները չեն հասկանում, վոր ար-

դլունաբերութիւնն զարգացումը կախված ե դլուղա-  
տնտեսության աճումից, ապա աջ թեքման ներկա-  
լացուցիչները չեն ըմբռնում, վոր առանց արդյունա-  
բերութիւնն վերելքի, ինդուստրիացման ուժեղ տեմպի  
անհնար և դյուզատնտեսության բարձրացումը, նրա  
վերակառուցումը: Նրանք չեն հասկանում, վոր առանց  
արդյունաբերության դեկավար և առաջնորդող դերի  
և առանց վորոշ չափով գյուղացիական տնտեսութիւնն  
հաշվին կատարվող ինդուստրիացման անկարելի բան  
և մեր յերկրի զարգացումը սոցիալիստական ուղիով,  
մեր տնտեսական հզորութիւնն հաստատումը, ընդդեմ  
կապիտալիստական շրջապատի: Ահա թե ինչու կու-  
սակցությունն անխնա և համառ պայքար և մղում  
նման տենդենցների դեմ:

Դյուզի թալանի, գյուղացիությունը վորպես  
գաղութ դիտելու հակալենինյան տեսակետների դեմ  
կուսակությունը հաղթական պայքար և տարել, մեր-  
կացըել տրոցկիստների բացահայտ ուղղորդունիստա-  
կան դեմքը: Ներկայումս գլխավոր հարվածն ուղղված  
է աջերի դեմ, վորոնք «գյուղացիութիւնն ուազմա-ֆեո-  
դալական շահագործման» մասին հորջորջող իրենց տե-  
սակետներով, փաստորեն, իրականում հանդես են գա-  
լիս ինդուստրիացման դեմ: Դրան ավելացրած ե նաև  
այն, վոր այդ մարդկանց կարծիքով անհրաժեշտ ե  
կարճ ժամանակամիջոցում վերջ տալ ապրանքային  
սովին: Այստեղ ել նրանք ամենաթույլ դիմադրութիւնն  
գծով գնալու հարցն են առաջադրում, շեշտը գնելով  
թեթև արդյունաբերութիւնն վրա:

Միանգամայն պարզ ե, թե հասարակական վոր  
խավերի տրամադրութիւնն արտահայտությունն ե

«գլուղացիության ուազմա-ֆեռղալական շահագործման  
դարձվածքը։ Դա առաջին հերթին գյուղական կապի-  
տալիստների տենչանքն ե, վորոնք յերազում են  
պատռել մեր արտաքին առևտորի մենաշնորհը։ Դասա-  
կարգային թշնամուն գերվելով, աշերը չեն տեսնում  
ամբողջական այն հակապատկերը, վոր գոյություն  
ունի կապիտալիզմի հետ համեմատած մեր պայման-  
ներում, նրանք հերքում են գյուղացիական հիմնական  
մասուայի նկատմամբ հաստատված լուրահատուկ նոր  
քաղաքականության բնորոշ կողմերը։

Զե՞ վոր մկրտու, շնորհիվ կուսակցության քա-  
ղաքականության, գնալով վերացման պրոցես և ապ-  
րում. այդ ե մեր կուրսը։ Գների տարբերությունը  
վճարվում ե մեր, խորհրդացիին պայմաններում, և դա  
կատարվում ե հիմնական մասսաների դրության ան-  
շեղ բարեկալման հիման վրա։

### ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԻԶԱԿ ԳՅՈՒՂԵՑԻՆ

Միքանի խոսք գյուղացիական մանր անհա-  
տական տնտեսությունների մասին, ուր գյուղի կենտ-  
րոնական գեմքն ե հանդիսանում միջակ գյուղացին։  
Աշերը սիրում են թմբկահարել, վոր կուսակցությունն  
սխալ քաղաքականություն ե տանում միջակի նկատ-  
մամբ, վոր նա մոռացել և աչքաթող ե արել Լենինի  
ավանդներն այդ կարևորագույն ու մեզ համար վճռա-  
կան նշանակություն ունեցող հարցում։ Լյադովը և  
Ֆրումկինը բացորու հիմնավորել են այդ տեսակեր և  
դեռ անցյալ ամռանը հարց բարձրացըրել, թե պրոլե-  
տարիատի դաշինքը միջակի հետ արդեն սկսում ե  
քանդվել, կուսակցության սխալ քաղաքականության

հետևանքով։ Այդ թեզիսն առաջադրել են աջ տարրեցի ուրիշ ներկայացուցիչներ եւս։

Դժվար չե նկատել, վոր ալդպես հարցը գնողները կուլակային տրամադրությունների արտահայտիչներն են հանդիսանում կամ լավագույն գեղքում մանր-բուրժուական ծովի պահպանման ջերմ կողմնակիցներ։ Այլապես ինչչվ բացատրել միջակին անվերջ զիջումներ անելու և կուլակային տնտեսությունների աճմանը չխանգարելու «թեորիան»։ Նման տեսակետը վոչ մի առնչություն չունի և չի կարող ունենալ հեղափոխական մարքսիզմի լենինիզմի հետ, վորը նոր հասարակակարգի կառուցման մարտական ուսմունքն եւ իսկ պատմության մեջ աննախընթաց այդ աշխատանքը կատարվում և պրոլետարիատի ղեկավար, առաջնորդ դերի անխախտ պահպանումով։ Բանվոր դասակարգը, կուսակցությունն իրենց քաղաքականությունը վորոշելիս լենում են վոչ թե միջակի այսորվանեղ շահերից, դրանց հարմարվելն իրենց քաղաքականության գերագույն սկզբունք ընդունում, այլ սոցիալիզմի կառուցման, տվյալ պայմաններում և ուժերով այն հաջողությամբ ավարտելու անհրաժեշտությունից։

Ինչ խոսք, վոր միջակի, մանր արտադրաքան այդ գլխավոր ներկայացուցչի շահերը չեն հակասում սոցիալիզմի շահերին, վոր նա իր վերջնական փշկությունը կարող և գտնել միայն սոցիալիզմի կատարյալ հաղթության մեջ։ Բայց մի բան և այդ որևեկտիվ ճշմարտությունը, այլ՝ միջակի՝ անհատական-մանը տնտեսության կրողի սուբյեկտիվ գիտակցությունը։ Յեպ հենց ալստեղից, այդ հայտնի հասկացողությունից ել առաջանում են մեր գյուղական աշխատանքի ու պայ-

քարի դժվարությունները։ Դրանով ել հիմնավորվում ե գյուղացիության այդ հիմնական մասսայի նկատմամբ մեր վարելիք զգուշ քաղաքականության ամբողջ կարևորությունը։ Յերբեք չպիտի մոռանալ, վոր սոցիալիզմի կառուցումը կատարվում ե, մանավանդ մեր պայմաններում, վոչ թե ընդդեմ այդ մասայի, այլ նրա մասնակցությամբ։ Առանց զյուղացիական հիմնական մասսայի մասնակցության հնարավոր չե սոցիալիստական շինարարությունը վոչ միայն զյուղում, այլև քաղաքում, քանի վոր առաջինը բազա յերկրորդի համար։

Զգույ ու խելացի բաղաբականությունով հանդերձ պրոլետարիատը կատարում է իր պատմական միստիան, վերակառուցում զյուղը, վերափոխում զյուղացիությունը։ Առանց գրա իմաստ չեր ունենա «պրոլետարական հեղափոխությանը զուգորդված զյուղացիական պատերազմը», այդտեղ ծնված բանվորա-զյուղացիական լաշինքը։

Ահա հենց այդ հանգամանքն եր նկատի առնում Մարքսը, յերբ Բակունինի գրքի վրա արած իր դիտողություններում գրում եր. «Պրոլետարիատը, վորպես իշխանություն, միջոցներ պետք ե ձեռք առնի, վորոնց հետեւանքով գյուղացու դրությունն անմիջականորեն կլավանա, և նա ինքը կանցնի հեղափոխության կողմը, միջոցներ, վորոնի իրենց մեջ պիտի կրեն հողի մասնավոր սեփականությունից կոլեկտիվ սեփականության անցնելու սաղմերը յեկ հետացնեն այդ անցումը, այնպես վոր ինքը—զյուղացին դրան կհասնի տնտեսական նանապարհով։ Այս տողերը Մարքսը գրել ե 60-ական թվականներին, յերբ Բակունինին ծանոթանալիս միաժամանակ արել ե իր դիտողությունները։

Պիտի ասել, վոր մեր զարգացման համար հանգուցակեա հանդիսացող այդ հարցում, յիթե ռձախերը զործում են այն սխալը, վոր մանր-բուրժուական գյուղացիական տնտեսությունը շփոթում են կապիտալիստականին և այստեղից ել յերկուսի վրա յիշ հարձակվելու (տնտեսական) հակալենինյան թեորիային հանգում, դաշինքը խղելու զործելակերպ առաջադրում, ապա մոտավորապես նույնն են անում աջերը, վորոնք, սակայն, կապիտալիստականը շփոթում են մանր արտադրության հետ և յերկուսի նկատմամբ ել նույն քաղաքականությունը պահանջելով, մանր սեփականության հավերժացման տեսակետն են պաշտպանում և այդ կերպ կապիտալիստական ելեմենտների բաղայի պահպանման նպաստում:

Վերջին հաշվով յերկու տեսակետն ել նույն արմատներն ունեն և գալիս են հիմքից տատանելու պրոլետարիատի դիկտատուրան:

Աջերի սխալը, նրանց հակալենինյան տեսակետը վոչ միայն նրանումն ե, վոր կապիտալիստականը խառնում են մանր արտադրության հետ (ըստ վորում դատարկ բաներ ու ջղալին ճիշեր են «կուլակին թունավորելու» մասին ասված խոսքերը), այլև այն, վոր նրանք հանդում են պրոլետարիատի պասսիվ դերին գյուղի վերափոխման զործում, անհատակրոն տնտեսությունները հավերժ պահպանելու տեսակետին: Իսկ միայն այս վերջինը համազոր ե կապիտալիստների գործին նպաստելուն, նրանց աճման հիմքը չթուլացնելուն ու չվերացնելուն:

Կուսակցությունն իր վորոշումներում և սոցիալիզմի համար մղած գործնական պայքարում յերբեք

աչքաթող չի անում անհատական տնտեսությունները, նրանց խաղացած և դեռ խաղալիք դերը մեր տնտեսական կյանքում։ Կոլեկտիվացման պրոցեսը վոչ միայն անհատական տնտեսություններին ցույց տըրպող ձեռնարկումներին չի հակադրվում, այլև վորոշիմաստով առաջինը բարձրանում ե լերկորդի վըա, կազմում նրա շարունակությունը։ Դրան իբրև ապացույց կարող են ծառայել այն միջոցները, վոր արդեն իսկ ձեռնարկել ե կուսակցությունը անհատական տընտեսությունների զարգացման համար ստիմուլ ստեղծելու, նրանց տնտեսական բազան բարձրացնելու, միաժամանակ նպաստելու կոլեկտիվացմանը, գյուղի սոցիալիստական վերակառուցմանը։

Այստեղ կարելի յե հիշատակել հացի գների վորոշ բարձրացումը, վոր իրականում բանվոր դասակարգի կողմից զիջում եր գյուղացիական հիմնական մասսալին, սոցիալիզմի կառուցման շահերը նկատի առնելով։ Ապա կոնտրակտացիալի գծով ձեռք առնվող միջոցները, վոր դյուրություններ ստեղծելով գյուղատնտեսության տարրեր ճյուղերի պլանավորման համար, միաժամանակ խոշոր չափերով ոգնում են անհատական տնտեսություններին, նրանց զարգացման և բարձրացման ավելի նորմալ հնարավորություններ սահմանում։ Յերկար չենք խոսում բերքատվության բարձրացման ուղղությամբ ծավալվող հսկայական աշխատանքների մասին, ուր իշխանությունը, կուսակցության վերջին հրահանգները հիմք առնելով, կատարում ե բոլոր հնարավորը։ Վերջապես գալիս ե գյուղատնտեսական հարկի նոր դեկրետը, վորտեղ դարձլալ նկատի լեն առնված միջակի շահերը, գյուղացիա-

կան հիմնական մասսայի տնտեսական բարձրացմանն ոգնող բոլոր կարելի միջոցները:

Մենք դիմամբ այսափ կանգ առանք անհատական Տնտեսությունների վրա, քանի վոր կուսակցության հասցեյին ուղղված աջերի մեղադրանքների մեջ դա հանդիպանում է հիմնական մոմենտը, Աջերը համարձակություն ունեն կուսակցությունը մեղադրելու կիսատրոցկիստական քաղաքականության մեջ։ Սակայն սլարդ եւ վոր այդ աղմուկը նրանց պետք է իրենց իրական ոպազորտունիզմը թագցնելու, մասսաների առաջ կուսակցության քաղաքականությունը վարկարեկելու միջոցով իրենց զիծն առաջ տանելու։

Բայց մի բան և ոեալքաղաքականությունը, նրա կիրառման համար գործադրվող միջոցները, ուրիշ բան՝ ֆրազներն ու դատարկ խոսքերը։ Յեվ կուսակցական մասսան այսոր այնքան ուժ և գիտակցություն ունի, վոր կարող եւ տարբերել դրսից լավ թղթի մեջ փաթաթված իսկական ապրանքը, նշմարել Մարքսի, Ենդելսի ու Լենինի յիտեւը թագնվող մեր որերի նորագույն ոեվիդիոնիստներին։

## ԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՊԱՅՔԱՐԸ ԸԵՎ ՆՐԸ ՄՐՈՒՄԸ ՆԵՐԿԱՅՈՒՄԸ

«Ձեռդալական շահագործման» մասին խոսողները, իրականում դեմ դուրս գալով ինդուստրիացման, միաժամանակ թշնամի յեն նաև գյուղի սոցիալիստական վերակառուցման, քանի վոր առաջինը վոչ միայն բարձրանում է յերկրորդի վրա, այլ և կոլեկտիվացման պրոցեսսն ուղղված է կուլակների դեմ, սահմանափակում են նրանց աճման բազան ու հնարավորություն-

Ները։ Դյուղի արտադրական պրոցեսսի կոռպերացումն իր զարգացման դժվարություններով հանդերձ, աստիճանաբար կրճատելով մանր ու մանրագույն անհատական տնտեսությունների ցանցը, տատանում և կուլակության աճման համար հող հանդիսացող բազան և այդպիսով հարվածում կուլտկ տնտեսություններին։

Ամբողջ խնդիրը նրանում և, վոր 1921 թ. Լենինի հրապարակնետած «ով ումը» ներկայումս դրվում և արտադրության ասպարեզը։ Ցեղ 15-րդ համագումարից հետո ուժգին թափով ձեռնարկված կուսակցության սոցիալիստական համաստարած արշավը հենց այդ ընդհանուր ֆոնի վրա յետեղի ունենում։ Խնչման և վերջին շրջանում մեղանում սրված դասակարգային պայքարի իմաստը։ Նրանում, վոր տատանվում են դասակարգային թշնամու գոլության տնտեսականարտադրական հիմքերը։ Բացարձակ կերպով դեռևս շարունակելով իր աճման պրոցեսը, թշնամին հիմնականում ստիպված և նահանջել, անձնատուր լինելու ուղին բռնել։ Ինարկե, հանդիստ ու թշնամու կողմից «անվրդով» չի կատարվում այդ նահանջը։ նա հեշտությամբ չի զիջում իր դիրքերը, այլ կատաղի դիմադրության ձեռնարկում բոլոր հնարավոր զծերով՝ տնտեսական-քաղաքական և իդեոլոգիական։

Ահա վերոհիշյալից յելնելով և մեր եկոնոմիկայի սոցիսլ-տնտեսական կառուցվածքի ներկա դասավորումը հիմք ընդունելով, կուսակցությունն արձանագրում ե, վոր հեղափոխության ու սոցիալիստական շինարարության զարգացման տվյալ ետապում անխուսափելիորեն սրվում և դասակարգային պայքարը։ Միաժամանակ կուսակցությունը շեշտում ե, վոր այդ

հանգամանքը մեր զարգացումը բնորոշող կինտրոնական մոմենտն եւ:

Այդ, իհարկե, չի նշանակում, թե գնալով դասակարգային պայքարը շարունակ սրվելու յեւ վոչ ամենին: Նման տեսակետը վոչ մի կառ չունի լենինիցմի հետ: Այդ կերպ մուծողներն ուղենչուղեն, թեկուզ ծպտյալ կերպով, կողմանակից պետք եւ լինեն ալսպես կոչված մի նոր հեղափոխության, քանի վոր շարունակ սրվող պայքարը պետք եւ վոր վերջիվերջո, ալսպես թե այնպես, լուծվի:

Կասկած չկա, վոր սոցիալիստական շինարարությունը, սոցիալիստական սեկտորի հաղթանակը հեռանկարային առումով, գնալով մեղմացնելու յեւ դասակարգային պայքարը, ուրեմն և դասակարգային հակասությունները: Զե՞ վոր մանր արտադրության ներկայացուցիչները, նախ և առաջ հողագործության կենտրոնական դեմք հանդիսացող միջակ գյուղացին, վերամշակման ու վերափոխման միջոցով, աստիճանաբար անցնում եւ սոցիալիստական սեկտորը: Միաժամանակ նվազում եւ կապիտալիստական տարրը, քանի վոր գնալով կրծատվում ենրա բազան:

Այս եւ մեր զարգացման հեռանկարը: Սակայն սխալ և չափից դուրս միակողմանի կլիներ այդ հեռանկարից բղխող ճիշտ դրությունը մեխանիկորեն փոխադրել մեր պայմանները և այդ կերպ ժխտել դասակարգային պայքարի սրումը ներկա ետապում: Այսոր մենք հենց ապրում ենք այդ սրումը, վորը պայմանավորվում եւ, կասեցինք, գլխավորապես ռով-ում-ը գուշատեսության արտադրական պրոցեսոի ասպարեզը փոխադրելով: Բայց այդպես գնել հարցը՝ նշանակում

ե կողմնակից լինել և անվերապահ ըմբռնել գլոփեւ կոլեկտիվացման, նրա սոցիալիստական վերակառուցման հրամայական անհրաժեշտությունը: Իսկ քանի վոր մարդիկ անկարեսը են համարում այդ հանգամանքը, նրա կողքով են անցնում, այն չեն նկատում, ապա պարզ ե, վոր նրանք հետևողական կերպով հարցին մոտենալով՝ պիտի բացասեն նայել դաստիարգային պայմանագրի արման փաստը ներկայումս: Այլապես ինչըվ բացատրել այն, վոր աջ թեքման գլխավոր կրողներն ու ներկայացուցիչները, 1929 թվին, կուսակցության 15-րդ համագումարից հետո Լենինի քաղաքական ավանդների մասին արտահայտվելիս, դրա հիման վրա «մեր ամբողջ կոմմունիստական աշխատանքի հեռանկարային մեծ պլանը» նկարելով սահմանափակվում են միայն նրանով, վոր ասում են, թե Լենինը ցույց ե տվել վոր «չի կարելի միանգամից մաքուր և նեղ կոմմունիստական իդեաները գյուղ տանել»:

Ինչ խոսք, վոր Լենինը խոսել է դրա մասին և հատկապես 1922 թ. դրա վրա շեշտ դրել: Բայց Լենինը միաժամանակ գրել է նաև գյուղի սոցիալիստական վերտիկառուցման մասին, վոր մեր ներկա պայմաններում կարևորագույն աշխատանք ե հանդիսանում: Պարզ ե, վոր դասակարգային պայքարի սրումը պիտի ժխտեն նրանք, վորոնք վոչինչ չեն ասում, կամ շատ աննկատելի, հաղիկ նշմարելի դնում գյուղի կոլեկտիվացման գործը:

Մարդիկ շփոթող վերապահումներով, աննշան ծանուցումներով ժխտում ու քողարկում են դասակարգային պայքարի անխուսափելի սրման բացահայտյերեւյթը: Բայց, իհարկե, այստեղ նրանք իրենց

ոպալորտըունիստական զիրքն աշխատում են ծածկել  
մարքսիստական ֆրազաբանությամբ, հանգամանք, վոր  
հատուկ և յեղել բոլոր ժամանակների ու բոլոր գույշ-  
նի ռեվիզիոնիստներին: Նախ ասում են, վոր իրենք,  
իհարկե ընդունում են դասակարգային պայքարը, նրա  
նոր ձեռքով շարունակվելը պրոլետարիատի զիկտա-  
տուրայի որով: Իհարկե, ասում են, «անցողիկ շրջա-  
նում դասակարգելը գեռ մնում են, և դասակարգային  
պայքարը ժամանակներով նույնիսկ սրվում են: Զենք  
խոսում այն մասին, վոր այս ձեռակերպումը պատաս-  
խան չի տալիս սոցիալիստական շինարարության գործ-  
նական խնդիրները լուծող կուսակցության առաջ  
դրված խնդիրներին: Նա վոչ միայն շատ ընդհանուր  
և, այլև անորոշ: Զե՞ վոր մենք խոսում ենք հեղափո-  
խության զարգացման ընթացիկ մոմենտի մասին:  
Ինչով բացատրել վորոշ ու բացարձակ պատասխանից  
խուսափելը և հարցը շփոթելը: Այդ պրիոմի իմաստը  
միանգամայն պարզվում է, յերբ ընդհանուր և շփոթ  
պատասխանից անցնում ենք նրանց քողարկված  
քննադատությանը դասակարգային պայքարի սրման  
փաստն ընդունող ուշեղտող տեսակետներինկատմամբ:

Յեվ իսկապես, ի՞նչ արժեք ունեն և ի՞նչ առի-  
թով են գրվում ու ասվում այսպիսի տողեր, թե «դա-  
սակարգերը, դասակարգային պայքարը տնտեսական  
հարաբերություններից անջատելու», փորձեր են արել  
բուրժուական տնտեսագիտները, վոր «միակ ճիշտը  
հանդիսանում ե Մարքսի թեորիան», և վոր «մեր կրի-  
զիսներին կարելի յե և պետք ե մոտենալ Մարքսի  
մեթոդովիայով», այլ վոչ թե բուրժուական տնտե-  
սագիտների, վորոնք իրենց «սոցիալական բաշխման

թեորիայով» թեկուզ արտաքինով կանգնում են «դասակարգալին սկզբունքի վրա»:

Հայտնի յեն մեր կուսակցության վորոշումներն ու բանաձևերը, հատկապես 15-րդ համագումարից սկսած, վորոնցում շեշտվել ե դասակարգալին պարգարի սրման անժխտելի փաստը: Բայց ովք կարող ե հաստատել վոր զբանում կուսակցությունն այսպիս կոչված լոկ «քաղաքական» անալիզ ե տալիս, դասակարգերն ու դասակարգալին պալքարն «անջատում ե անտեսական հարաբերություններից»:

Միայն դիտավորյալ նպատակ ոգիտի ունենալ և կամ միամիտ պիտի լինել հարցն այդպիս դնելու համար: Հարկ չկա խոսելու տնտեսական և քաղաքական յերեսութների հայտնի միասնականության և յերկրորդի առաջինով պայմանավորված լինելու մասին: Բոլորին հայտնի յե լենինի դարձվածքը, թե՝ քաղաքականությունը՝ դա խտացված եկոնոմիկա յի:

Բայց կարեորն ու ելականը դա չե, այլ այն, թե ինչպես, վորպիսի Փոկուսներով մարդիկ իրենց ուղղորդյունիստական դեմքը թագցնում են մարքսիստական ֆրազարանության տուկ, դրանով բացասելու համար դասակարգալին պալքարի սրումը ներկայումս, այս, նենց ներկա ռջանում: Միջին դրագետ կուսակցականի համար, վոր ծանոթ ե կուսակցության վերջին շրջանի բանաձևերին ու վորոշումներին, պարզ ե, վոր դասակարգալին պալքարի սրման իր անալիզը կուսակցությունն անում ե մեր սոցիալ-տնտեսական կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունների հիման վրա, վոր սոցիալիստական արշավի, սոցիալիստական սեկտորի հաղթանակի հետեւանքով

կապիտալիստական տարրերն ստիպված են տեղի տալ և այլն։ Ձե՞սու պայքարի սրումն առաջացել է ինդուստրիագուման ու կոլեկտիվագուման ծավալման աշխատանքների հետեւանելով միայն։ Այսուղետք, վոր անխուսափելիորեն գլուխ և բարձրացրել դասակարգակին թշնամին և բոլոր գծերով մեր դեմ կատաղի զիմաղը ուժան ձեռնարկել։

Բայց չե՞ վոր ինդուստրիացման տեմպի ուժեղացման ու զբուղի սոցիալիստական վերակառուցման դեմ են դուրս գալիս աջ տարրերը։ Այդաղեց ել պարզ և, վոր իրենց կոնցեպցիայի զարգացումով՝ նրանք անխուսափելիորեն պիտի հանգեն և հանգում են դասակարգակին պայքարի սրման բացասամանը։ Յեվ վորքան վոր համարակոր չե այդ ամենը պարզ ու վորոշ դնել կուսակցական մասսաների առաջ, ապա նրանք ստիպված են վորոշ մախինացիաների դիմելու և մարքսիզմի ու լենինիզմի յետեւ թագնվելով, իրենց ոպպորտյունիստական գիծն «անաղարտ» ցուցց տալու։

Սակայն այդ նոմերը չի անցնի։ Կուսակցությունը, նրա հավաքական միտքն ու կամքը անզուգական կերպով տիրապետում են մարքսիզմ-լենինիզմին և միայն նրանք կարող են պաշտպան կանգնել այդ վերջիններին։

Այդպիսով, դասակարգակին պայքարի հարցերում ևս մենք տեսանք աշերի իսկական դեմքը, ինդուստրիացման և կոլեկտիվացման գործին դեմ լինելու ընդհանուր լուսի տակ։

## ԱԶ ԹԵՇՈՒՄԸ ԿՈՐԻՆՑԵՐՆԱԽ

Այժմ անհրաժեշտ և համառոտակի կանգ առնել ալն կապի վրա, ավելի ճիշտ՝ միջաղգային դրությունը

ընորոշող ընդհանուր ֆոնի վրա, վորոն առաջին պլանի վրա յե դնում աջ վտանգը:

Վոչ միայն միամիտ պիտի լինել, այլև մեր հեղափոխությունն ու սոցիալիստական շինարարությունը միջազգային պայմաններից առանձնացած մի ամենակին անկախ մեծություն համարել, չնկատելու համար այն ընդհանուրը միջազգային մասշտաբով, վոր ներկայումս կոմինտերնի ներսում շեշտակի յե դարձնում աջ թեքման դեմ պայքարելու անհրաժեշտությունը:

Կոմինտերնի շարքերում, արտասահմանյան կուսակցություններում աջ վտանգի հիմքը կազմում և կապիտալիզմի ապրած ներկա շրջանին սոցիալ-դեմոկրատական գնահատական տալը, այլ կերպ, իերը հեղափոխական պայքարի հարցերում կոմմունիստները սոցիալ-դեմոկրատական մոտեցում են հայտնարերում: Դրա ցայտուն որինակն են աջերը գերմանական կուսակցության ներսում և կոմինտերնի միքանի գործիչներ, վորոնք նրանց տեսակետը պաշտպանում են:

Մեն շենք խոսում ոպպորտյունիստական բացահայտեսակետերի մասին, առանձնապես կանգ չենք առնելու կառուցկու և Հիլֆերդինգի մտքի նոր «գոհարների» վրա: Այդ գուրս ե մեր այսորվա նպատակից: Սակայն ամեն կասկածից վեր ե, վոր աջերը, ու նախ և առաջ գերմանական աջերը, գերվել են մարքսիզմի այդ ռենեգատներին:

Հիմնական հարցը, — դա կապիտալիզմի ստարիլի-դացիային և վերաբերում:

Աջերի տված գնահատականը կապիտալիզմի ստարիլիզացիային, վորպիս հաստատ ու յերկարաժեղ մի յե-

րելույրին իր հոգեոր սնունդն ստանում և կառցկուց և Հիլֆերդինդից, ոոցիալ-զեմոկրատիալի ամբողջ պրակտիկայից:

Այսպես, որինակ, Կառցկին իր վերջին նշանավոր աշխատության մեջ, վորը, նրա ասելով, «իր գլուխ գործոցն եւ, սևով սպիտակի վրա զրում եւ.

«Կապիտալիստական սեփականուրյունը պեսք և նորից յել նորից վերածնվի»\*):

Այս ձևակերպման հետ, վորով բանվոր դասակարգի գործի դավաճանը կապիտալիզմի գովքն և կարգում, դժվար չեն հաշտեցնել աջերի տված գնահատականը:

Կոմինտերնի գործկոմի քարտուղարության անդամ Եմբեր-Դրոն, գերմանական աջերին ու հաշտվողականներին իր պաշտպանության տակ առնելով, առում եւ.

«6. րդ համաշխարհային կոնգրեսը փաստուեն դասապարտեց սաբիլիզացիայի ընդհանուր նապաղ ձեվակերպումը.— Փաստ, յերերուն յել այլն\*\*):

Բայց Եմբեր-Դրոյի և բոլոր աջերի ու հաշտվողականների ստարիլիզացիան փատած ու յերերուն չեն: Ապա ինչպիսին եւ այդ ստարիլիզացիան: Պարզ եւ, վոր այդ պատասխանը պիտի լինի դրական:

Յեկ զարմանալի չեն, վոր ստարիլիզացիայի կայուն յել հաստատ լինելու գնահատականից յելնելով եւ, վոր աջերը քաղաքական տնտեսական պայքարի ասպարիզում միանգամայն այլ լողունգներ են հրապա-

\*) Новейшие откровения Карла Каутского,  
եջ 59:

\*\*) «Большевик» за 28 г. № 23—24, еջ 40:

ըակ նետում։ Դա պարզ և հասկանալի յե, յեթե հարցին մոտենանք նրանց տեսակետի հետևողական դարդացման իմաստով։

Դարձյալ մի որինակ։

Ծառ չնշին ե տարբերությունը, տարածության իմաստով՝ ընդամենը միքանի քայլ Հիլֆերդինգի «տնտեսական դեմոկրատիա»-յի պահանջից մինչև արդյունաբերության վրա հսկողություն հաստատելու լուզունգը, անմիջական հեղափոխական սիտուացիայի բացակայության միջոցին։

Ընդհանրապես ստարիլիզացիայի նման գնահատականից հեղափոխական պայքարն որակարգից հանելու, դասակարգային թշնամու հետ հաշտ ապրելու տրամադրությունների մի ամբողջ կծիկ ե ծայր առնում, վորը շատ յեռանդով սկսել են քանդել աջերը։

Հենց դրանից ե բղխում սոցիալ-դեմոկրատիային աջերի տված գնահատականը, վերջապես նրանց վերաբերմունքը գեպի պատերազմի վտանգը։ Կայուն ստարիլիզացիայի հետ սերտորեն կապվում են պացիֆիստական տրամադրությունները, հակասությունների քողարկումը և ալլն, և այլն։

Յեթե կառցկին հարգանքի խոսք ե ասում և չափաղանց խոշոր սպասելիքներ զնում Ազգերի Լիգայի վրա, թե «նա անհրաժեշտ է վոչ միայն պատերազմի վտանգը հաղթահարելու, այլ յեկ նոր հասարակակարգ կառուցելու, վոր պիտի գա փոխարինելու կապիտալիստականին»\*), առա նրան են մոտենում աջերը, յերբ պատերազմի վտանգի գեմ պայքարելն անկարեռը բան

\*) Տես Новейшие откровения Карла Каутского. Москва. 1929 г., եջ 76։

են համարում, նույնիսկ, վոմանց ասելով, դրա մասին խոսելը «միամիտների վորսալու» կանխակալ աշխատանք եւ:

Գերմանական աջերից վոմանք կարծում են, վորի բրենք հեղափոխական վճռական քայլ են անում, յերբ ասում են, թե կապիտալիզմը հակասություններ ունի, և վոր այդ հակասությունները նրան վախճանի կհասցնեն:

Մնում եր, վոր այդ ել չասելինու Բալց չե՞ վոր մեր որերում այդ հանդամանքն ընդհանրապես ընդունում են նաև կատաղի ոպպորայունիստները:

Հարց ե ծագում՝ վրձ գծերով և թնչպես ե արտահայտվում տեսակետների ու զործելակերպի այն կապը, վոր գոյություն ունի, ասենք, գերմանական և Համկոմկուսի ներսի աջերի միջև:

Ծայր աստիճան յերեխայություն և միամտություն կլիներ կարծել թե մեր ազերը բացահայտ կերպով պաշտպանուս են նրանց, վորոնք համարյա ամբողջությամբ բոլորի են իրենց սոցիալ-դեմոկրատական եվոլյուցիան և կուշարքերից դուրս ընկել: Անշուշտ, աջերն այնքան խամ չեն և ունեն իրենց ամշակված ստրատեգիան ու տակտիկան:

Ընդհանուրը, վոր կա աջերի միջև, դա լիկվիդատորական դիրքավորումն ե դեպի հեղափոխական պարքարն ու սոցիալիստական շինարարությունը, թշնամու առաջ նահանջելը և դիրքերը նրան զիջելը: Այս կապակցությամբ չենք խոսում այն մասին, վոր սոցիալ-դեմոկրատիան արդեն շտապել ե ասել իր դրական խոսքն աջ թեքման մասին և վողջունել նրա հանդես գալը:

Շատ բնորոշ ե, վոր, տարբեր վերապահումներով, մեր աջերը բացարձակ սարոտածի յին յենթարկում այն պայքարը, վոր Կոմինտերնի բոլոր սեկցիաները Համկոմկուսի ոգնությամբ տանում են իրենց աջերի դեմ: Նրանք քողարկված կերպով պաշտպանում են, որինակ գերմանական աջերին, խոսելով այն մասին, վոր աջ թեքման դեմ պայքարը սրելով, համապատասխան մարմինները կազմալուծում ու քայքայում են Կոմինտերնը: Իհարկե, Կոմինտերնի «Քայքայման» ու կազմալուծման» մասին նրանց բարձրացրած աղմուկը պետք ե, վորպեսզի զրանով խսկ քողարկեն իրենց գեմքը, պաշտպանեն գերմանական աջերին: Զե՞ վոր այլ կերպ անհնար ե պաշտպանել իրենց զինակիցներին: Կոմինտերնի ու նրա սեկցիաների ծանր զրության մասին յեղած խոսակցությունները պետք են միջադպային գծով իրենց ոպարուտյունիստական դեմքը ծածկելու:

## ԱԶԵՐԻ ԲԵՄԲԵՍԵՆՔԸ ՆԵՐԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԵԱԾԻ, ԲՅՈՒԹՈԿՐԱՏԻԶՄԻ ՄԱՍԻՆ

Յերկու խոսք աջերի տեսակետների մասին ներկուսակցական դեմոկրատիայի, բյուրոկրատիզմի և այլնի: Այս գծով նրանց ամբողջ «արտադրանքը» վոչ մի նոր բան չի պարունակում իր մեջ, քան այն, վոր կրկնում ե տրոցիկստական արսենալից վերցրած արդեն հայտնի ֆրազները: Առանձին թվերի ու տեղեկությունների պետք չկա՝ ապացուցելու համար, վոր, չնայած մեր ապրած լուրջ զժվարություններին, մասսայական ինքնաքննադատությունը և նախաձեռնությունը յերբեք այնքան ծավալուն չեն յեղել ինչպես

այդ ներկայումս եւ Միայն կույրերն ու մեր կատաղի թշնամիները չեն նկատում այն հսկայական աշխաժությունը, ենառողիազմը, վորով լցված են բանվորական և աշխատավորական լայն մասսաները, գործնական այն ակտիվ մասնակցությունը, վոր ինքնաքննադատության միջոցով մասսաները բերում են սոցիալիստական շինարարությանը։ Ինքնաքննադատությունը, նրա միջոցով արդեն ձեռք բերված խոշորագույն նվաճումները այն մեծ հաղթանակն են, վոր կատարել ե կուսակցությունը սոցիալիստական հասարակակարգի հսկայական մասսայական կառուցման ասպարիզում։

Իսկ ինքնաքննադատությունը կուսակցության շարքերում - զա ներկուսակցական դեմոկրատիան ե, նրա ծավալումն ու ամրացումը։ Յերբեք բյուրոկրատիզմի դեմ մզած պայքարն այնպիսի ուժեղություն ունեցած է ուշադրությամբ, ուժերի խոշոր մորիլիզացիայով չի մոտեցել բյուրոկրատիզմի դեմ տարբող պայքարին, ինչպիս և այդ հիմա։

Իզուր չե, վոր կուսակցության Համամիութենական 16-րդ կոնֆերենցիալի որակարգում դրված և հատուկ հարց բյուրոկրատիզմի դեմ մղվելիք պայքարի մասին։ Ինչպիս աշխատանքի ու պայքարի մյուս բնագավառներում, այնպիս ել այստեղ ելականը կատարվող գործնական մասսայական աշխատանքն ե և վոչ թե աղաղակներն ու դատարկ ֆրազները։

Կուսակցության մեջ տիրապետող բյուրոկրատիզմի մասին խոսելով, աջերը փաստորեն դեմ են դուրս գալիս կուսակցական զեկավարության ուժեղացմանը։ Նրանք փորձ են անում վոչ միայն պրոֆմիությունները կուսակցությանը հակադրել, այլ և վորոշ չա-

փով իրենց համար գործունեյության այսպես կոչված «աղատ հնարավորություն» պահանջեր:

Պրոֆմիությունները կուսակցությանը հակառակելու և կուսակցական դեկավարության դեմ դուրս գալու տեսնդենցներն արդեն իսկ արտացոլում են գտել նույնիսկ պրոֆմիութենական մամուլում: Այսպես, որինակ, Մետաղագործների Արհմիության Համամիութենական կենտրոնի որգան «Մետալլիստ» ի այս տարվա 3-րդ համարում Կողելելի «Լենինյան որերը և պլրոֆմիությունները» վերնագրով մի հոդված և զետեղել, ուր հեղինակը, հիմնվելով 1921 թ. դիսկուսիայի միջոցին Լենինի պաշտպանած տեսակետների վրա, գրում ե, թե ներկայումս անբույլատրելի յե պրաֆմիություններին հրամայելը յեկ վարչական մերոդներով դեկավարելը:

Դժվար չեն նկատել, թե ում դուռն և ծեծում կողելել:

Այդպիսի տողեր գրել այսոր, լերը նման տեսնդենցները հիմնականում վոչնչացված են, և յերբ բացահայտ հականեղափոխական աշխատանք կատարող տրոցկիստներն այլ միջոցներով են պայքարում կուսակցության դեմ, դա նշանակում ե բանվորական մասսաներին կուսակցության դեմ հանել, հրահրել հետամնաց տարրերի վատառողջ տրամադրությունները:

Կուսակցության դեկավարության թուլացումը, մինչև նրա վերացումը՝ դա մեր դասակարգային թըշնամիների վաղուցվա տենչանքն ե, և պրոֆմիությունները կուսակցությանը հակադրելով՝ աջերը նրանց սրտին մոտ գործ են կատարում: Այսոր ըոլոր, գուշնի և ռանդի հականեղափոխականները, սկսած բացարձակ միավետականներից մինչև տրոցկիստները, ջանում են տատանելու կուսակցական դեկավարությունը և այդ կերպ հարվածելու պրոլետարիատի դիկտատուրային:

Բլուրոկրատիզմի մասին բամբասելով՝ աջ թեք-  
ման ներկայացուցիչներն իրականում դեմ են դուրս  
գալիս կուսակցական դիսցիպլինալին, կուսակցա-  
կան որդանների վորոշումները կիրառելուն. Նրանք  
այդ ճանապարհով առաջ ընթանալով՝ փաստորեն հան-  
դում են կուսակցության մեջ խմբավորումներին ա-  
ղատություն տալու տրոցկիստական թեզիսին:

Չե՞ վոր վոչ մի կերպ չի կարելի արդարացնել  
այն հանդամանքը, վոր աջ թեքման ներկայացուցիչ-  
ները կուսակցության ղեկավար որդաններից գաղտնի  
բանակցությունների մեջ են մտնում ղեռես յերեկվա-  
ակտիվ տրոցկիստաների հետ ու կուսակցության ղե-  
կավարության հասցելին մի ամբողջ շարք բամբա-  
սանք հյուսում: Սաոր և անթույատրելի վարմունք  
ե, ըալլշեկզմի կազմակերպչական սկզբունքները վոտ-  
նակով անել ե, յերբ մարդիկ կուսակցության գլխա-  
վոր գծի ոգտին քվեարկելով, միաժամանակ կուլիս-  
ների յետև ղեկավարությունը վարկարեկելու ասեկո-  
սեներով են զբաղվում: Ի՞նչպես կարելի յե կողմնակից  
լինել կուսակցության զլխավոր գծին ու զրան զուգ-  
ընթաց այդ գիծը կենսագործող ղեկավար մարմի  
դեմ բոլիներ կազմակերպելու փորձերի դիմել: Սրան ա-  
վելացած այն, վոր շարունակ սարստածի յեն յեն-  
թարկվում կուսակցության վորոշումները, հրաժարա-  
կաններ ներկայացվում, աշխատանքից ու պատաս-  
խանատվությունից փախչելու խայտառակ պահանջ-  
ներ արվում: Պիտի արձանագրել այն, վոր մեր քննած  
բոլոր հիմնական հարցերում աջերն արդեն կարողա-  
ցել են ձևակերպել իրենց հակալենինան, հակակու-  
սակցական տեսակետները և փաստորեն բոլոր խնդիր-  
ներումն ել հանդես են յեկել իրենց պլատֆորմայի ե-  
լեմենտներով: Հենց միայն հերիք ե հիշատակել այն,  
թե ինչպես ե վորակել լենինը առաջադրույն ղեկավար

ընկերների աշխատանքից ու պատասխանառվությունից փախչելը, դժվարին և ծանր ըոպեյին նահանջի ուղին բռնելը:

«Վճռական մոմենտին հրաժարական տալու սպառնալիքը հեղափոխությունը սարստածի յենթարկելու ձեերից մեկն եւ այստեղ գործը լոյալության մեջ չե, այլ նրա, վոր չի կարելի հաղթել հեղափոխության մեջ, յեթե զեկավարները տատանումների և հրաժարականների հանդիպեն դեպքերի լուրաքանչյուր դժվարին շրջադարձի միջոցին «իրենց» շրջանում, վերևը կանգնածների շրջանում, «առաջնորդների մեջ» (Լենին, հ. 17, եջ 376):

Այս առենից հետո պարզ ու վորոշ պիտի տսել, վոր աջ թեքման տենդենցիները և սկզբում նրա տուաջադրած մշուշապատ պահանջներն արդեն վերածվել են բարականին պարզ ու վարու լիկիդատորական պլաֆորմայի, Այսոր կուսակցության դեմ աջերը պահպարում են բամբասանքի ու ֆրակցիականության ուղիներով. կուսակցության ու նրա զեկավարության դեմ ձեռնարկած իրենց պայքարում նրանք կրկնում են վաղուց հայտնի տրոցկիստական պրիոմները, դժգույն նախագուշակումներ մեր կործանման մասին, դժվարություններով վախեցնելը և Լենինից բերած ցիտառներով սպեկուլացիա անելը:

Բնորոշ ե, վոր աջ «ոպպողիցիալի մարտական կոչին» շատապել ե ձայնակցել և այն իր պաշտպանության տակ առնել սոցիալ դեմոկրատական-հակահեղափոխական մասուլը: Հստ յերեսութին, արդեն իսկ նրանց լեզվով ե խոսում աջ թեքումն իր ներկայացուցիչներով:

«... Վերադարձ դեպի տնտեսական ռեալիզմը՝ հրաժարվելով ուտոպիստական սխեմաներից, ազգաբնակության վճռական նշանակություն ունեցող դա-

սակարգերի (գլուղացիության) արամազրությունների և զիմադրության զգաստ հաշվառում, անկախ նրանից՝ տեղավորվում ե այդ արդյոք պաշտոնական իրդեուղիալի շրջանակներում—տհա աջ ոպպողիցիսի մարտական կոչը»:

**Այսպիս ե արձագանգում և արժեքավորում «Соц. Вестник»-ը:**

Աջ թեքման ներկայացուցիչներին, քանի գեռուշ չե, չեր խանգարի հիշել ծերունի թերելի խոսքերը, վոր ասում եր. «Ենչպիսի սխալ եմ գործել, վոր զասակարգային թշնամու գովքին եմ արժանացել»:

Ամեն կասկածից արդեն վեր ե աջ թեքման բյուրեղացումը և ձեակերպումը: Ահա թե ինչու նորերս վերջացած կուսակցական կոնֆերենցիաները միանգամայն իրավացիորեն արձանագրեցին, վոր ներկայումս արդեն աջ թեքումը մտել ե իր ծեփավորման ու զարգացման նոր երջանի, անորոշ, յերկղիմի տրաունջներն ու գժգոհություններն արդեն տեղի յւն տվել ձեվակերպված հակակուսակցական գծի:

Հստ այնմ ել պիտի փոխվի կուսակցության վերաբերմունքը դեպի աջ թեքումը: Անհրաժեշտ ե ուժեղացնել պայքարը, մեծ ուշադրություն դարձնելով, վոր կուսակցական մասսաները զինվեն լենինիզմի հիմնական խնդիրների պարզ գիտակցությամբ և մանրամասն ծանոթանան աջերի հակակուսակցական, հակաբենինյան վողջ եյությանը: Սխալվում են նրանք, ովքեր կարծում են, թե իդեոլոգիական պայքարն աջերի դեմ արդեն սպառված ե, թե այդ շրջանը կուսակցությունը բոլորել ե և ալնու Անշուշտ, անցյալ տարվա աշնան ից սկսած, կուսակցությունը, նրա բոլոր կազմակերպությունները բավականին աշխատանք են թափել՝ վեր հանելու համար աջ տրտունջների ու պահանջների իրական իմաստը, նրանց ոպպորտյունիստական գեմքը:

Բայց դա դեռ աշխատանքի մի մասն ե, սկըզբ-նական շրջանը:

Բոլոր գծերով պիտի շաբունակել իդեռովդիտական պալքարը, կուսակցական ու սոցիալխատական շինարարության գործնական խնդիրները դիտելով աջ թեքման լիկվիդատորական պլատֆորմայի դեմ տարվող համակուսակցական պալքարի ընդհանուր լուսի տակ: Փիտի տալ աջերի պլատֆորմայի տեսական քաղաքական ընդհանուր քննադատականը, միաժամանակ զրան զուգընթաց առորյա կյանքում, սոցիալիստական շինարարության պրակտիկայում կովել աջ թեքման կոնկրետ արտահայտությունների դեմ:

Այդ լեռկու խնդիրները միասնական աշխատանքի տարբեր կողմերը պիտի կազմեն, լեռկորորդը պայմանավորվելու յի անպայման առաջինով: Զե՞ վոր կան մարդիկ, վորոնք թեև «կողմնակից են» աջ թեքման դեմ պալքարելուն, բայց սիրում են միայն «ընդհանուր սկզբունքային պալքարը»՝ չեն ուզում զործունենալ մանր-մունք խնդիրների հետ կա և հակառակ ծայրահեղությունը, յերբ աջ թեքման կոնկրետ, յերբեմն այլանդակ արտահայտությունը հենց այնպես սովորական սխալ շատ անկարեռը բան և հայտարարվում: Անհրաժեշտ ե անխնա պայքարի այդ տրամադրությունների դեմ, վորոնք ըստ ելության «վախոկոտովականութիւնի» – հաշտվողականության տարբեր վարիանտներն են:

### ՄԵՐՈՒԼԻ ԸՆԹԱՑՈՒՅՔ

Մասնավորապես մեծ դեր ե վերապահվում մեր մամուլին, վորը խոշոր անելիքներ ունի: Թերթերը պիտի կարողանան իրենց աշխատանքը դասավորել այնպես, վոր աջ թեքման դեմ մղվող լենինյան անհաշտ պալքարի մարտկոցներ հանդիսանան: Նրանք իդեռովդիտական բաղադրական անաղարտ դիրքավորում պիտի ունենան, այլապես թե պարզաբանման աշխատանքը և թե կոնկրետ յերեսություների դեմ տարվող պալքարը կարող են վոչ միայն իրենց նպատակին չծառայեն այլև հակառակ արդյունքներ տալ:

Ալդ կապակցությամբ պիտի ասել, վոր մեր մամուլում արտառոց սխալներ են պատահում:

Որինակի համար, ըստ յերեսութին, «Մաճկալճի խմբագրությունը վորոշել եւ «բանաստեղծությունների» միջոցով տանել իր պայքարը։ Այնտեղ տպված ել.

### Պայքարենիք

Աջ թեքման դեմ.

«Չախ» թեքման դեմ.

Հաշավողականության դեմ.

Խնամիության դեմ.

Կոմանապարծության դեմ.

Բլուրոկրատիզմի դեմ։

Պիտի ասել վոր նման մեթոդը կարող ե դեզուրիենտացիայի յենթարկել մասսաներին, չկարողանալով կազմակերպել նրանց ուժն ու կարողությունը։ Նման սխալ ու դեղորիենտացիոն, բայց այս անգամ արգեն հոդվածներ և վրչ «բանաստեղծություններ» տպվել են նաև «Խորհրդագիրն Հայաստան»-ում։

Տես մասնավորապես Ա. Շահինյանի հոդվածը, ուր ասվում է. «Պայքարի այս նոր ետապում պետք ե ուժեղացնել կուսակցական մասսաների մորիլիզացիան աջ, հաօսվողական, տրցկիլիսական, (սուրակետով. ՅԵ. Հ.) հականեղափոխական յել բոլոր տեսակի Հակալենինյան գաղափորախոսների դեմ։

Ինչ խոսք, վոր այս ձեռվ չի կարելի ճիշտ ու հաջող պայքար ծավալել, չերք թերթում տպվածն իրենից ներկայացնում ե մի ամբողջ շիլափլավ։

Ս ոկայն կարեոր ե հիշատակել, վոր պարզաբանման աշխատանքի միջոցին թուլլ են տրվել ավելի կոպիտ տեսական-քաղաքական սխալներ։ Այսպես, որի-


նակ, «Յերիտասարդ Բայլշեիկ»-ի վերջին համարում, աջ թեքման դեմ գրված հոդվածում հեղինակը միամտորեն կարծում է, թե մեզանում աջ թեքման համար բաղա լեն հանդիսանում «բանվորական բյուրոկրատիան», «բանվորութիւն վերին խավերը»։ Մեղմ ասած սա մեխանիկական մոտեցում է, ինը Արևմըտյան Յեղրոպայի որինակը նույնությամբ փոխադրվում է մեզ մոտ։

Ընդհանրապես մեր մամուլի հիմնական սխալներից մեկն այն է, վոր նա սկզբից չի կարողացել անհրաժեշտ պարզությամբ ու վորոշակեռութիւնմբ դնել հարցերը։ Այդ տեսակետից մի չտեսնված շփոթ է ներկայացնում նրա հջերում այս տարի զետեղված Շենինը թեքումների դեմ։ Վերնագրով հոդվածը։

Հեղինակը շփոթում է միմյանց հետ բանվորական շարժման մեջ գոյություն ունեցող հակապրոլետարական հոսանքները ներկուսակցական թեքումների հետ, մինչդեռ վորակապես գրանք բոլորովին տարբեր բաներ են։ Հենց այդ սխալ կոնցեպցիան հիմք ընդունելով՝ նա կարծում է, թե ոպպորտյունիզմը, ոեփորմիզմը և նույնիսկ մենշեղմմը թեքումներ են։

Խոսելով Խորհրդային Միության պայմաններում թեքումների առաջացման պատճառների մասին, հեղինակը վոչինչ չի ասում գյուղացիության, մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսությունների մասին, միայն հիշատակում է բրուրժուազիան կամ այդ դասակարգի մնացորդներին։

Բոլոր միջոցները ձեռք առնելով՝ մամուլը պիտի ռւժեղացնի իր պայքարն աջ թեքման



(104)

Е. ГРАНТ

Против новейших попыток  
ревизии ленинизма

A 1  
4414



Фев 15 4.